ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երեխայի համընդհանուր նպաստների վերաբերյալ միջազգային համաժողովին մասնակցելու նպատակով Ժնև (Շվեյցարիա) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը**

Սմբատ Սաիյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Ժնև (Շվեյցարիայի Համադաշնություն), 2019 թվականի փետրվարի 6-8-ը

4. **Հրավիրող կողմը՝**

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ

5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն Երեխաների համընդհանուր նպաստների վերաբերյալ միջազգային համաժողովին

6. **Քննարկված թեմաները**

1) Երեխաների համընդհանուր (ունիվերսալ) նպաստները որպես Երեխայի սոցիալական պաշտպանության (ապահովության) իրավունքի բաղկացուցիչ մաս,

2) Երեխաների համընդհանուր (ունիվերսալ) նպաստները որպես երեխաների շրջանում աղքատության հաղթահարման հիմնական գործիք,

3) Երեխաների համընդհանուր (ունիվերսալ) նպաստների միջազգային փորձը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համաժողովի ընթացքում քննարկվել են երեխաների համընդհանուր (ունիվերսալ) նպաստների կապակցությամբ առկա խնդիրները, ներկայացվել է խնդրո առարկայի վերաբերյալ միջազգային փորձը և այդ փորձից քաղված դասերը:

Ընդ որում, քննարկումները կազմակերպվում էին պանելային սկզբունքով և յուրաքանչյուր պանելային քննարկումից հետո ամփոփվում էին պլենար նիստի ընթացքում:

Մասնավորապես, նշվել է, որ բոլոր երկրներում երեխաներին միտված նպաստների շրջանակներում քննարկվող հիմնական հարցադրումներն են.

1) դրամական նպաստներ, թե՞ ծառայություններ (ոչ դրամակա՞ն նպաստներ),

2) համընդհանուր (ունիվերսալ) նպաստներ, թե՞ եկամուտների վրա հիմնված նպաստներ:

Բանախոսները հիմնականում նշում էին, որ յուրաքանչյուր երկիր ինքն է որոշում երեխաներին տրվող նպաստների նշանակման պայմանները՝ կախված բազմաթիվ իրողություններից (երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակ, աղքատության մակարդակ, բյուջետային հնարավորություններ, պատմականորեն ձևավորված հասարակական հարաբերությունների առանձնահատկություններ և այլն):

Սակայն, կան խնդիրներ, որոնք համընդհանուր են:

Մասնավորապես, նշվեց, որ աղքատության վրա ուղղակի ազդեցության տեսանկյունից, որպես կանոն, ավելի արդյունավետ է դրամական նպաստների քաղաքականությունը, քանի որ այն ոչ միայն նպաստում է երեխաների շրջանում աղքատության վերացմանը, այլև որոշակիորեն նպաստում է երեխա խնամող մայրերի սոցիալիզացիային նրանց որոշակի դրամական միջոցներ տրամադրելու միջոցով:

Նշվեց նաև, որ հասցեականության (թիրախավորման) տեսակետից առավել արդյունավետ են ծառայությունները (ոչ դրամական նպաստները), քանի որ շատ

ավելի հեշտ և արդյունավետ է վերահսկել, որ ծառայությունները ստանան երեխաները: Իսկ դրամական նպաստների դեպքում գործնականում անհնար է վերահսկել, որ գումարը ծախսվի երեխայի լավագույն շահի հաշվառմամբ:

Միաժամանակ, դրամական նպաստները, ի տարբերություն ծառայությունների (ոչ դրամակա՞ն նպաստների), ավելի արդյունավետ է վարչարարության (կառավարելիության) տեսանկյունից:

Մյուս կողմից, բանախոսների կարծիքով համընդհանուր (ունիվերսալ) նպաստները ավելի արդյունավետ են եկամուտների վրա հիմնված նպաստների համեմատ, քանի որ համընդհանուր (ունիվերսալ) նպաստների դեպքում, ի տարբերություն եկամուտների վրա հիմնված նպաստների.

1) վերանում է բացառման և ներառման սխալների հավանականությունը,

2) էապես նվազում է իրականացվող վարչարարությունը, ինչը նպաստում է հասանելությանը,

3) էապես նվազում են կոռուպցիոն ռիսկերը և այլն:

Սակայն բանախոսները հիմնականում նշում էին, որ համընդհանուր (ունիվերսալ) նպաստների հիմնական «թերությունը» ծախսատարությունն է (այսինքն՝ ավելի թանկարժեք համակարգ է):

Բանախոսներն առանձնահատուկ ուշադրության արժանացրին նպաստների նշանակման և վճարման գործընթացում անձի արժանապատվության և ամոթին վերաբերող խնդիրներին՝ որպես կարևորագույն ասպեկտ:

Մասնավորապես, նշվեց, որ եկամուտների վրա հիմնված նպաստների դեպքում կարող են առաջանալ անձի արժանապատվության և ամոթին վերաբերող խնդիրներ, որոնց արդյունքում տուժում է երեխան:

Բանախոսները նշեցին նաև, որ երեխաներին միտված նպաստներն ըստ էության հանդիսանում են ներդրում մարդկային կապիտալում, քանի որ ըստ էության լուծում են ապագայի խնդիր:

8. Քննարկման արդյունքում որոշվեց՝

Առաջիկայում խորհրդաժողովի կազմակերպիչները կամփոփեն և կհրատարակեն խորհրդաժողովի նյութերը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Ըստ էության, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամն առաջարկում է երկրներին ներդնել երեխաների համընդհանուր (ունիվերսալ) նպաստների համակարգ՝ առնվազն երեխայի կյանքի առաջին հազար օրվա համար:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

12.02.2019թ.